

բեր մեծության բնակավայրերի, նրանցում բնակչության թվաբանակի հետ, անհրաժեշտ ապահովել այդ հիմնարկների առավելագույն մտղելիությունը գյուղական բնակչությանը: Գ. Ե. Լուխմանովը առաջարկում է ստեղծել սպասարկման աստիճանածև համակարգ: Ըստ նրա ստորին օլակը կհամարվի միջգյուղական կենտրոնը, բարձր՝ շրջանայինը, իսկ հիմնական օլակը՝ վարչապետ շրջանը, որպես տնտեսական և տարածային կազմակերպման սկզբնական միավոր: Լիցիտիս կենտրոնը անկախ բնակավայրի տիպից, հանդիսանում է միասնական համալիր իրեն ենթակա տարածքի կառավարման և սպասարկման կազմակերպման համար²:

Կուլտուրական շատ օբյեկտներ գյուղում բուտեղծվում են առանց գիտական հիմնավորման: Կուլտուրական հիմնարկների ռացիոնալ տեղաբաշխումը, նրանց տարածային կազմակերպումը նպաստում են նրանց տարածային կենտրոնացմանը, որը թույլ է տալիս նյութական և աշխատանքային ռեսուրսների էիջ ծախսումների ղեկավարում հասնել կուլտուրական սպասարկման բարձր մակարդակի:

² Д. Н. Лухманов. Некоторые условия формирования местных центров обслуживания и их систем.—В сб.: «Вопросы географии» Сб. 91, М. 1972, с. 105—107.

Գյուղական բնակչության կուլտուրական սպասարկման մեջ իրենց ուրույն տեղն ունեն սպասարկման շարժական ձևերը: Նրանց կազմակերպման վրա ազդում են մի շարք գործոններ՝ բնակավայրերի շափը, բնակչության խտությունը և այլն:

Գյուղի կուլտուրական սպասարկման ոլորտը բարդ, անընդհատ զարգացող ոլորտ է որը սերտ կապի մեջ է սոցիալականի հետ: Գյուղական բնակավայրերի սոցիալ-կուլտուրական ոլորտի դինամիկ զարգացումը մեր օրերում կախված է գյուղի աշխատավորության կյանքի և աշխատանքի, կենցաղի և հանգստի պայմանների համալիր լուծումից: Այդ իսկ պատճառով մենք առաջարկում ենք գյուղական բնակչության կուլտուրական սպասարկման առջև ծառայած խնդիրները լուծել՝ զուգակցելով սոցիալականի հետ: Դրանցից առավել էական են.

1. Գյուղի սոցիալ-կուլտուրական ոլորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդումը,
2. Գյուղական բնակչության կյանքի, կենցաղի պայմանների բարելավումը,
3. Գյուղական բնակչության կրթական մակարդակի բարձրացումը,
4. Գյուղական կուլտուրական հիմնարկների (գրադարանների, սկոլրների, կինոթատրոնների և այլն) ցանցի ընդլայնումը, նրանց աշխատանքի կատարելագործումը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՄՄԱԿԱՐԱՆԻ

ՏԱՐԻԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՐՋԱՆԸ

Երևանի պետական համալսարանում ավանդաբար անցկացվող պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջանը այս տարի սկսվեց նոյեմբերի 27-ին: Լիազումար հիստը, որը տեղի ունեցավ նույն օրը, համալսարանի խորհրդի նիստերի դահլիճում, բացեց գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ՀԳԱ թղթակից անդամ, պրոֆ. Վ. Սարգսյանը:

Այսօր Երևանի համալսարանում, նշեց նա, գիտական գործունեություն է ծավալվում 20 ուղղություններով, որոնցից 21-ը՝ բնագիտական և 8-ը՝ հումանիտար ու հասարակական գիտությունների գծով: Համալսարանը մասնակցում է համամիութենական՝ 18, ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի՝ 12, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի՝ 7 և Հայաստանի գիտությունների ակադեմիայի՝ 5 կոորդինացիոն ծրագրերի ու պլանների կատարմանը, որոնք ընդգրկում են բնագիտության ու հասարակագիտության ամենատարբեր բնագավառները:

ԽՍՀՄ ԳԱ կոորդինացիոն պլանով շարունակվում են հայագիտական հետազոտությունները, ուսումնասիրվում է հայոց, ռուսաց և օտար լեզուների գործառնություն հիմնական հարցերը, նրանց զարգացման օրինաչափու-

թյուններն ու առնչությունները: Լուրջ ուշադրություն է դարձվում հայ ժողովրդի հին ու միջին դարերի և նոր շրջանի պատմության ու մշակույթի, ԽՍՀՄ ժողովրդների և արտասահմանյան երկրների հետ նրա ունեցած պատմական կապերի հետազոտություններին:

Մի շարք ուսումնասիրություններ էլ, շարունակեց պրոֆ. Վ. Սարգսյանը, վերաբերում են մեր հանրապետության բնական միջավայրի պահպանության ու բարելավման գիտական հիմունքների մշակմանը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, աշխարհագրական կանխագուշակումներին, հայ բնակչության և մշակույթի առաջիկ կզմանը, հնէագեոմորֆոլոգիական ու ջրաերկրաբանական հարցերի բնագրականը:

Երևանի համալսարանում հետազոտություններ են կատարվում նաև նվիրված պետության և իրավունքի, հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման օրինաչափություններին, ինչպես և արեվելագիտության, բուրգագիտության ու հայոց դատի պաշտպանության խնդիրներին, իր ներածական խոսքը եզրափակելով, ասաց պրոֆ. Վ. Սարգսյանը:

Այնուհետև լիազումար հիստում «Ակսել հակունց. մեծ գրողը և նահատակը» թեմա-

յով զեկուցում կաողաց հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀՊԱ թղթակից անդամ, պրոֆ. Հր. Քամրազյանը: Ամեն մի ճշմարիտ գրականություն, նշեց զեկուցողը, ունի իր անամոք ցավերը և անվերսդարձ կորուստները. որոնք մշտապես խոր կսկիծ են առաջացնում եկող սերունդների մեջ: Թերևս այդ ցավերն ու բաց վերքերն ավելի շատ են հայ գրականության մեջ, քանի որ դաժան հանգամանքների պատճառով նրա գլխին հաճախ է կախմամբ եղել մահվան ոտվականը: Ահա այսօր են ձեզ հետ ուղում են գրուցել մի զարմանալի մայրու մասին. շարունակեց պրոֆ. Հր. Քամրազյանը. որի վախճանը նույնպես մի հավերժական ցավ է դարձել հազ ժողովրդի համար: Այդ մարդը Ակսել Բակունցն է: Ծանր եղավ նրա վախճանը, շատ աղբերգական, բայց գրական սկիզբն արտասովոր պայծառ էր. հեքիաթի պես: Ժամանակակիցներին նրա մուտքը թվում էր մի գարմանալի հայտնություն: 1924 թ. մամուլում լույս տեսան «Փավառական նամականի» ակնարկները: Թերթերն սկսեցին տպագրել անձանք գրողի երկերը: Այս հեղինակը՝ «մուգ կապույտ, աչքերով, էլեգիական թախիծը դեմքին» մի երիտասարդ, Գորիսի գավառական գյուղատնտեսն էր. որի քսանհինգ տարին նոր էր բոլորել, իսկ գրական հոշակն իսկույն թև առել, հասել էր մայրաքաղաք: 1926 թ. մարտին նա տեղափոխվեց Երևան և արժանի տեղ գրավեց վարպետների՝ Եղ. Չարենցի, Դ. Դեմիրճյանի և Ստ. Ջորյանի կողքին: Մի տարի հետո լույս տեսավ առաջին գիրքը՝ «Մթնանոթ», նշանակալից երեկույթ, որի շուրջը բացվեց մեծ խոսակցություն: Բաց տեսք և դառնություն: Բազմաթիվ բարեկամների ու համակողմների հետ, ինչպես և պետք էր տպասել, յուշացան նաև առաջանդի հավերժական թշնամիները: Թումանյանի խոսքով ասած՝ փորո զետին քեռով՝ դուրս սողաց նախանձը: Միջակություններն սկսեցին թույն կուտակել: Բախտավոր սկիզբն ունեւ նաև բարդություններ, քանի որ երևան եկած խոշորագույններն ու ծուղակները հետո դառնալու էին աղետալի և անկատարական: Սակայն. այնուամենայնիվ, տաղանդն արդեն կյանքի մեջ էր, գրական մայրուղու մոտ:

Ձեկուցողն այնուհետև ներկայացրեց Ա. Բակունցի անցած հարուստ ու հետաքրքրական կյանքի ուղին: Վերլուծելով մեծ գրողի գրական ժառանգությունը, նա ընդգծեց այն միտքը, որ Բակունցը թափանցում էր կյանքի խորերը. հոգու գաղտնաբեկող՝ տեսնելով այնտեղ յուրս ու ստուգող. եռթանկությունն ու յատ. հոգու ծանր ճեղքումը. և մանավանդ. զեղեգությունն անստապարհ: Քչերին. շատ քեռին էր հստակ աղտոսն նրբորեն և ալոսան խոռունկ հատնագործել առօրյա ընթացքի մեջ գտնվող կյանքի բանաստեղծությունը՝ «սովորականի» և «հասարակի» մեջ 202

թարմված զեղեցկությունը: Սա, ըստ երևույթին, դժվարագույնն էր, քանի որ զեղեցկությունը գտնվում է անհնուր և շատ ավելի լեքախարհում, ավելի շուտ՝ արտաքինից սրագործն անցնում է խորքը, որը, թերևս, անտեսանելի է սովորական աչքին: Բակունցը նախընտրել է հենց այդ զեղեցկությունը, որը թարմված է խորքերում, տեսնում էր այն սմեներ. որի կողքով այնքան անտարբեր անցնում է գրական միջակությունը: Երիտասարդ տաղանդավոր գրողը ստեղծում է իր զեղեցիկ նովելներն ու պատմվածքները, պատկերներն ու ակնարկները, լույս են տեսնում նրա «Բորտի տղան», «Միրհավը», «Միրանի փողը», «Այախական մանուշակը» և այլ ստեղծագործություններ: Այնուհետև Բակունցը փոքր ձևերից անցնում է ծավալուն ձևերին ու փպասանությանը, գրում է տարեգրություն, փպակ, վեպ: Մեկը մյուսի հետևից տպագրվում են նրա «Եղբայրության ընկուզեմները», «Կարմրաբարը», «Կյորենը», «Թաշատուր Աբովյանը» և այլն: Ժամանակի աղմկոտ ճարտասանության մեղողորտում, ուր տիրեքար ճնշում էին գործադրումը գռեհիկ սոցիոլոգները՝ ժխտելով ազգ, հայրենիք, Հալաստուն հասկացությունները, հարձակվում ճշմարիտ հայրենասիրության և պատմական անցյալի ավանդների վրա, ծնվում էր խորհրդահայ առաջին պատմական վեպը:

Այս շրջանում էլ Բակունցի անվան ու գրական ժառանգության շուրջը ստեղծվում են հսկասական կառծիշներ, հենց թոփոփ այս պահին գալիս են մտալ օրերը: Մահահոտը բռնում է ողջ մթնոլորտը: 1986-ին, որպես առավել վտանգավոր «հանցագործ», «դաշնակառական», «հակահեղափոխական», «տեռորիստ», բանտարկվում է նաև այս նուր արվեստագետը, որի նմանները շատ հազվագյուտ են աշխարհ գալիս: Ամեն տեսակ մատնիչներ, միջակություններ, սև նախանձով լեցուն յնձի մարդիկ հասնում են իրենց նպատակին: 21-րդ տարիներ շարունակ նրանք Բակունցին մեղադրում էին դասակարգային խորթության մեջ, համարում ճացիոնալիստ, սպիտակ գվարդիական, արյունաբքու խմբապետ. որը դիմակ է հագել և խորհրդային գրականության մեջ մտել ուղղակի դաշնակցության պատմեղով ու պահանջով՝ յունենալով գրական ձիրք: Այդ ծանր օրերին նրան իր պաշտպանության տակ է առնում ժամանակի մեր մյուս մեծ նահատակը՝ Եղ. Չարենցը: Սակայն դա էլ չի փոկում վիճակը:

Ձեկուցողն այնուհետև անդրադարձավ այդ տարիների գրական անառողջ մթնոլորտի, Բակունցի եղերական ճակատագրի հարցերին. սկայակույն թունոտ ժամանակաշրջանը բնութագրող մի շարք արժեքավոր փաստաթղթեր:

Ահա այս արյունոտ մթնոլորտում ավարտվեց Ակսել Բակունցի ողբերգությունը: Նա ապրեց միայն երեսուցյոթ զարում, ստեղ-

խաղործեց հազիվ մի տասնամյակ: 1987 թ. իուլիսի 18-ին զնդակահարվեց մի ազնիվ ու արդար խմբի հետ: Մի քանի ամիս հետո, 1987 թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը ձիասայրով անհայտ ուղղությամբ տարան նաև Չարենցի տանջախար մտքմիջը: Այսպես ավարտվեց մեր դարի մեծագույն ոճիրներից մեկը. մի աղետ, որը պատկանում է ոչ միայն հայ ժողովրդին, այլև ողջ աշխարհին, քանի որ դա մտքի, լույսի և խղճի սպանություն էր, որն, ինչպես միշտ, այնպես էլ մնաց անպատիժ...

Ակսել Բակունցը ուներ մի նվիրական իղձ, արտահայտված զուլալ խոսքով, «Բրառտի տղան» նովելում, վերջում ասաց զեկուցողը: «Ուզում եմ,— ասում է նա,— որ այս անգարդ տղերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը», այսինքն խոսքը մնա այնպես հավերժ, որքա ինքը՝ մայր բնությունը: Եվ իրոք, մեր մեղեդին մեղմորեն հնչում է մարդկանց ճամփեքին: Համեմարի ստեղծագործությունը, իբրև վերին պարզև, անզեղ ջուր է դնում ուրիշ վարդերի վրա և ոսկե ճշուշով պարտորում հոգիները:

«Կիսահաղորդչային փոխակերպիչներ. հետազոտությունները և կիրառության հետազոտությունները ժամանակակից տեխնիկայում» — այսպես էր կոչվում իհագումար նիստում կարդացված մյուս զեկուցումը. որի հեղինակն էր կիսահաղորդչային և ռիչեկտոնիկների ֆիզիկայի ամբիանի վարի. ՀԳՄ թղթակց անդում, պրոֆ. Վ. Հարությունյանը:

Այսօր մեր համրապետության մեծ էներգետիկան, ասաց նա, հիմնականում հեհվում է նավթի և գազի այրման վրա, որը լիովին բերվում է դրսից և, ինչպես հայտնի է, մեծ դժվարություններով: Մակայն, անկախ ամեն տեսակի զժվարություններից, Մերկայումս մեր երկրում թափ է առնում էներգետիկական ճգնաժամը, տարբեր պատճառներով պակասում են Շտվթի, ածխի, գազի, բենզինի և մյուս վառելանյութերի պրոտանուումն ու ար-

տադրությունը, փակվում են ԱէԿ-ները, դադարեցվում նորանոր օբյեկտների շինարարությունը և այլն: Այս պայմաններում անկախության ձգտող Հայաստանը առաջին հերթին պետք է մտածի էներգիայի սեփական աղբյուրներով իրեն ապահովելու մասին: Էներգիայի այդպիսի աղբյուրներ կարող են լինել առաջին հերթին, արևը, քամին ու ջուրը:

Այնուհետև պրոֆ. Վ. Հարությունյանը կանգ առավ էներգիայի այդ աղբյուրների օգտագործման վրա: Զեկուցողը հատկապես ընդգծեց արևի, ջրի և քամու ուժերը ժողովրդական տնտեսության մեջ օգտագործելու անհրաժեշտությունը: Նա ասաց, որ բնության այդ հզոր ուժերի էներգիաները կարելի է փոխակերպել այլ էներգիաներով: Օրինակ, արեգակի էներգիան մարդու համար էկոլոգիապես ամենամաքուր, անվտանգ և բնական էներգիան է, որը կարելի է փոխակերպել ջերմային, էլեկտրական կամ քիմիական էներգիաների: Սրանք էլ իրենց հերթին, ասաց զեկուցողը, կարելի է փոխակերպել մեխանիկական և այլ տեսակի էներգիաների:

Այնուհետև զեկուցողը խոսեց իրենց ամբիոնում այդ ուղղությամբ կատարվող գիտահետազոտական աշխատանքների մասին, վկայակոչեց այն լուրջ արդյունքները, որոնք քուտացվել են համալսարանի գիտնականների կողմից:

Իհագումար նիստից հետո, գիտական նստաշրջանը շարունակվեց ֆակուլտետներում, հայագիտական կենտրոնում, «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորումում և ֆիզդաստիարակության ամբիոնում, որը տևեց մինչև դեկտեմբերի 5-ը: Ինն օրվա ընթացքում 22 գիտական բաժանմունքներում և 16 ենթաբաժանմունքներում կարդացվեց 860 զեկուցում, որոնցից 240-ը հումանիտար ու հասարակական գիտությունների գծով:

Վ. Ս. ՄՍՂԱՆՅԱՆ